



Երևանի Օրհուս կենտրոնի 2013թ.

**կատարած աշխատանքների տարեկան
հաշվետվություն**

/հունվար-դեկտեմբեր/

Գործունեության եզրափակիչ հաշվետվություն

1. Նախարան և ընդհանուր տեղեկություններ ծրագրի մասին

Երևանի բնապահպանական տեղեկատվության հասարակական (Օրհուս) կենտրոնը 2013թ. իր աշխատանքային գործունեությունը սկսել է հունվարի 10-ին:

Հաշվետու ժամանակահատվածում Երևանի բնապահպանական տեղեկատվության հասարակական կենտրոնի մասնակցությամբ, կենտրոնում և կենտրոնի նախաձեռնությամբ անցկացվել է 32 միջոցառում:

Ստորև ներկայացվում է դրանց բաշխումը ըստ հանդիպումների տարատեսակների.

Միջոցառում Քանակ 32

Միջոցառման ուղղվածությունը	քանակը	տոկոս
Հասարակական և կլոր սեղան-քննարկումներ	4	-
Հանրային լսումներ	3	-
Գործնական աշխատանքներ և արձագանքներ	5	-
Այցելություններ, աշխատանքային և խորհրդատվական հանդիպումներ	10	-
Դասընթացներ, սեմինար-քննարկումներ էկոկրթական միջոցառումներ	20	-
Շնորհանդես	4	-
Միջազգային հանդիպումներ, սեմինարներ	1	-
Տարվա ընթացքում կենտրոնի այցելուների ընդհանուր քանակը	1091(413 այցելու, 678 միջոցառման մասնակից)	-
ՀԿ ներկայացուցիչները	32	%
պատանիներն ու երիտասարդներ	43	%
ԶԼՄ ներկայացուցիչներ	8	%
տեղական ինքնակառավարման, տարածքային կառավարման մարմինների, այլ պետական կառույցների ներկայացուցիչները, գործարարներ	9	%
Այլ /շահագրգիռ քաղաքացիներ/	8	%

Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

Հաշվետու ժամանակահատվածում կազմել է 413 մարդ:

Ըստ ամիսների Կենտրոնի ծառայություններից օգտվողների քանակը

հունվար- 39	օգոստոս-22
փետրվար- 57	սեպտեմբեր-24
մարտ- 68	հոկտեմբեր-33
ապրիլ- 27	նոյեմբեր-29
մայիս- 25	դեկտեմբեր-27
հունիս-33	
հուլիս-29	

ՁԼՄ-ների հետ համագործակցություն /թերթեր, TV-ներ, ծրագրեր, հաղորդումներ/ Հաշվետու ժամանակահատվածում Երևանի ՕԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումները լուսաբանվել են մի շարք կայքերում, մասնավորապես՝ www.ecolur.org, www.panorama.am, www.arka.am, www.azatutyun.am մի շարք այլ կայքերում, *Новости Армении*, Առավոտ թերթերում, ինչպես նաև Արմենիա, Հ1, Կենտրոն հեռուստաընկերությունների լուրերի թողարկման ընթացքում, Հանրային ռադիոն եթեր է հեռարձակել կենտրոնի հայտարարությունները:

Փորձագետների խորհրդի նիստ /քանի անգամ, ինչ է քննարկվել, տարեկան պլաններ/

Չնայած նրան, որ Երևանի ՕԿ-ի փորձագետների խորհուրդը չի գործում, Կենտրոնի համակարգողը կենտրոնի կողմից ձեռնարկած բոլոր հարցերի շուրջ խորհրդակցում է փորձագետների հետ, այդ թվում՝ համաձայնեցնում է կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի ուղղությունները: Նուբարաշենի աղբավայրից կենսազազ ստանալու ծրագրի շուրջ, ինչպես նաև կենտրոնի գործունեությանն առնչվող մի շարք այլ հարցերում, համակարգողը մշտապես խորհրդակցել է «Խազեր» էկոլոգումշակութային ՀԿ-ի փորձագետ Արամ Գաբրիելյանի հետ, Երևան քաղաքի ջրային օբյեկտների աղտոտվածության, խնդրի լուծման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու շուրջ՝ փորձագետ Գ. Մուշեղյանի, Ք. Հովհաննիսյանի հետ, Երևան քաղաքի կանաչ տարածքների պահպանության, դրանց ընդլայնման, անօրինական կառուցապատումների խնդիրներով՝ «Հանուն կայուն մարդկային զարգացման ասոցիացիա» ՀԿ-ի նախագահ Կ.Դանիելյանի, «Դավա-Մոնա» հիմնադրամի նախագահ՝ Ռ.Ղազարյանի հետ և այլն:

2. Օրագրի իրագործումն ըստ դրված նպատակների,

2.1 ՆՊԱՏԱԿ 1

Համայնքներում կազմակերպում է «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) և շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերի լուսաբանման աշխատանքները՝ պարզաբանելով դրանցով երաշխավորված հասարակայնության իրավունքները:

2.1.1 կատարված գործողություններ,

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիայի (այսուհետ՝ Օրհուսի կոնվենցիա) լուսաբանման թվով 5 միջոցառում, այդ թվում՝

- 2.1.2 Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի «Կադաստրի և Էկոլոգիայի» ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանողների,
- 2.1.3 ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի Քաղաքագիտության բաժնի Ազգային անվտանգության մասնագիտացում, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների
- 2.1.4 «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ հովանավորությամբ իրականացվող «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթություն երիտասարդների համար» ծրագրում ընդգրկված աշակերտների և ուսուցիչների,
- 2.1.5 Չարենցավանի քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, դպրոցների, քոլեջների բնագիտական առարկաների դասավանդողների,
- 2.1.6 ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտի Էկոակումբի և այլ ուսանողների համար և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար:

Մանրամասն ներկայացվել են որոշումների կայացմանը մասնակցելու և առողջ, պաշտպանված ու բարեկեցիկ շրջակա միջավայրում ապրելու՝ Օրհուսի կոնվենցիայով սահմանված իրավունքների մասին,

անդրադարձ է եղել նաև շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող այլ միջազգային պայմանագրերին, ինչպես նաև ներկայացվել է Հայաստանի Օրհուս կենտրոնների գործունեությունը և քաղաքացիական հասարակական պայքարի դրական օրինակները:

2.2 *Ձեռք բերված արդյունքներ:*

2.2.1 Միջոցառումների արդյունքում թվով 105 մարդ իրազեկվել է Օրհուսի կոնվենցիայի և Կոնվենցիայով սահմանված իրենց իրավունքների մասին,

2.2.2 Միջոցառումները խթան են հանդիսացել հասարակության մասնակցությանը շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող հարցերի քննարկման և լուծման գործընթացներին,

2.2.3 Միջոցառումները խթան են հանդիսացել նաև երիտասարդների մոտ շրջակա միջավայրի հանդեպ հոգատարության, պատասխանատվության, ապագա սերունդներին հաշվետվողականության վարքագծի ձևավորման գործում, շատ երիտասարդներ ցանկացել են, որ իրենց էլ. փոստերը գրանցվի Օրհուս կենտրոնի ցանցում, որպեսզի հնարավորություն ունենան պարբերաբար ծանոթանալու կենտրոնի գործունեությանը, ինչպես նաև մասնակցելու շրջակա միջավայրի հարցերի շուրջ կազմակերպվող քննարկումներին:

2.2 ՆՊՍՏԱԿ 2

Հետևում է պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացին և դրանց ընդունման վաղ փուլում, հասարակայնության պատշաճ մասնակցությունն ապահովելու նպատակով, տարածում է համապատասխան տեղեկատվությունն ու կազմակերպում քննարկումներ (կլոր սեղաններ, բանավեճեր և այլն):

ՕԿ-ը պետական մարմինների կողմից շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ որոշումների ընդունման հնարավորինս վաղ փուլում նպաստում է հասարակության մասնակցությանը: Տեղեկանալով որևէ նախագծի, այդ թվում՝ իրավական ակտերի, նախատեսվող գործունեության, պլանների, ծրագրերի մասին տարածում է համապատասխան տեղեկատվությունը շահագրգիռ հանրության շրջանում. տարածվում է և՛ հակիրճ տեղեկատվություն և՛ նախագծերը կամ նախագծերի հղումները:

2.2.1 *կատարված գործողություններ,*

Հաշվետու ժամանակահատվածում ՕԿ-ը շահագրգիռ հանրության շրջանում տեղեկատվություն է տարածել հետևյալ նախագծերի վերաբերյալ.

2.2.1.1. Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆարքիկայի նոր պոչամբարի նախագծի հանրային լուսմների մասին տեղեկատվությունը.

Մինչև հանրային լուսմները վերոնշյալ նախագիծը մի քանի անգամ տարածվել է շահագրգիռ հանրության շրջանում, ինչպես նաև կենտրոնում կազմակերպվել է աշխատանքային հանդիպում այս հարցով զբաղվող փորձագետների հետ: Հանրային լուսմների արդյունքում վերոնշյալ նախագծին տրվել է բացասական եզրակացություն, որում մեծ էր խնդրին իրազեկ ՀԿ-ների ներկայացուցիչների և փորձագետների դերը:

2.2.1.2. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի նախագծի հանրային քննարկումների մասին տեղեկատվությունը.

Մինչև հանրային քննարկումը, նախագիծը մի քանի անգամ տարածվել է շահագրգիռ հանրության շրջանում: Հասարակական կազմակերպությունների կողմից կատարված առաջարկությունները տեղադրվել են ՕԿ-ների կայքում, դրանց մասին տեղեկատվությունը նույնպես տարածվել է շահագրգիռ հասարակության շրջանում: Մի շարք ՀԿ-ների, ինչպես նաև ՕԿ-երի ներկայացուցիչների կարծիքով նախագիծը ունի բազում թերություններ, այդ է պատճառը, որ ՕԿ-ը պարբերաբար «հիշեցնում» է նախագծի մասին և կարծիքների հավաքագրում է կատարում: Ներկայումս նախագիծը գտնվում է ՀՀ ԱԺ-ում և ՕԿ-ների կողմից նախագծի կապակցությամբ նամակ-առաջարկ է պատրաստվում, միաժամանակ կենտրոնը համագործակցում է նաև ԱԺ-ի գյուղատնտեսական և բնապահպանական հանձնաժողովի հետ, որպեսզի ապահովվի հանրության պատշաճ մասնակցությունը նախագծի քննարկման գործընթացին:

2.2.1.3 «Գենետիկորեն ձևափոխած օրգանիզմների մասին» ՀՀ օրենքի նախագծի խորհրդարանական լուսմների մասին հայտարարությունը.

ՕԿ-ը տարվա ընթացքում պարբերաբար, մինչև ԱԺ-ի օրակարգում ընդգրկվելը, մի քանի անգամ օրենքի նախագիծը տարածել է շահագրգիռ հանրության և մասնագիտական կառույցների շրջանում: Խորհրդարանային լուսմներին, կենտրոնի կողմից ապահովվել է մի շարք ՀԿ-ների և ոլորտի մասնագետների մասնակցությունը:

2.2.1.4. Օրհուսի կոնվենցիայի իրականացման 4-րդ Ազգային զեկույցի նախագծի վերաբերյալ տեղեկատվությունը.

ՕԿ-ի կողմից շահագրգիռ հանրության շրջանում մի քանի անգամ տարածվել է Ազգային զեկույցի ձևաչափը, այնուհետ զեկույցի նախագիծը և Օրհուսի կոնվենցիայի Ազգային համակարգողի հետ կազմակերպվել է նախ աշխատանքային քննարկում, որտեղ հանրությանը ներկայացվել է զեկույցի

Հայաստանի Օրինու կենտրոններ

ձևաչափը և զեկույցի պատրաստմանը մասնակցության ընթացակարգը, իսկ այնուհետ հանրային քննարկում, որտեղ շահագրգիռ հանրության և շահագրգիռ բոլոր կառույցների մասնակցությամբ քննարկվել է զեկույցի նախագիծը:

2.2.1.5. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթը.

ՕԿ-ների աշխատանքային հանդիպման ժամանակ, փորձագետ Արամ Գաբրիելյանի և ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ Բն Բնապահպանական ռազմավարական ծրագրերի ու մոնիթորինգի վարչության «Շրջակա միջավայրի պահպանության տնտեսական մեխանիզմների, ստանդարտների ու տեխնիկական կանոնակարգերի» բաժնի պետ Լ. Ավետիսյանի հետ քննարկվել է նախագիծը և որոշվել է մի շարք առաջարկություններ ներկայացնել ՀՀ կառավարությանը վերոնշյալ փաթեթի վերաբերյալ:

2.2.1.6. Նախատեսվող գործունեությունների այն բոլոր նախագծերի և դրանց հանրային լսումների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք ներկայացվել են ՀՀ բնապահպանության նախարարություն փորձաքննության՝ ներառյալ նախագծերը, եթե դրանք հասանելի են եղել ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում:

2.2.2 Ձեռք բերված արդյունքներ:

2.2.2.1 ՕԿ-ի կողմից ձեռնարկված գործողությունները, նպաստել են հանրության մասնակցությանը և ոլորտի մասնագետների ներգրավմանը որոշումների կայացման գործընթացին՝ հնարավորինս վաղ փուլերում, երբ դեռ հնարավոր է ազդել ընդունվող որոշման վրա:

2.2.2.2 Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների, ոլորտի փորձագետների մասնագիտորեն հիմնավորված կարծիքները էական ազդեցություն են ունեցել ՀՀ բնապահպանության նախարարության՝ Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագծի վերաբերյալ ընդունվող որոշման վրա և նախագծին տրվել է բացասական եզրակացություն

2.2.2.3. «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի վերաբերյալ ՀՀ Կառավարություն է ներկայացվել մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են համայնքներին հատկացվող բնապահպանական սուբվենցիաների ավելացմանը, դրանց նպատակային օգտագործմանը նպաստելուն, ինչպես նաև առաջարկվել է այդ վճարները

հետագայում հասցնել 100 %-ի և հատկացումները կատարել բոլոր համայնքներին, այլ ոչ թե ընտրված, նկատի ունենալով այն հանգամանքը, որ բնական ռեսուրսները բոլորինն են:

2.2.ՊԱՏԱԿ 3

Մասնակցում է հասարակական լուսմներին և տարածում դրանց ընթացքի, ինչպես նաև արդյունքում կայացված որոշումների վերաբերյալ տեղեկատվությունը:

2.2.3 կատարված գործողություններ,

Հաշվետու ժամանակահատվածում ՕԿ-ի համակարգողը մասնակցել, ինչպես նաև աջակցել է հետևյալ հանրային լուսմներին և քննարկումներին.

2.2.3.1 «Ագրոսպասարկում» ԱՄ-ի Վարդենիսի շրջանային միավորում ԲԲԸ կողմից ներկայացված «Դարանակ» ՓԷԿ-ի կառուցման նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացության, ազդակիր համայնքի ղեկավարի և հասարակական կարծիքի շրջակա միջավայրի վրա ազդեցության հասարակական լուսմներին: Համակարգողի կողմից մի շարք հարցադրումներ և առաջարկություններ են ներկայացվել նախագիծն իրականացնող մարմնին, որոնք արձանագրվել են և նշվել է, որ կքննարկվի: Հանրային լուսմի վերաբերյալ Էկոլուր ՇԿ-ի կայքում տեսանյութ և տեղեկատվական նյութ է տեղադրվել, որը տարածվել է ՕԿ-ի կողմից:

2.2.3.2 Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացության հասարակական լուսմներին: Այս նախագիծը ստացավ բացասական եզրակացություն: Կենտրոնը հասարակության շրջանում ոչ միայն տարածել է նախագիծը, և ապահովել է նրանց մասնակցությունը հասարակական լուսմներին, այլ նաև ակտիվ մասնակցություն է ունեցել հանրային լուսմներին, ինչպես նաև տարածել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված բացասական եզրակացությունը:

2.2.3.3 Օրինուի կոնվենցիայի իրականացման 4-րդ Ազգային զեկույցի հանրային քննարկմանը: Այս զեկույցի շուրջ 2 քննարկում տեղի է ունեցել ՕԿ-ում, իսկ 3-րդ քննարկումը Էկոլոգիական իրավունքի գիտաուսումնական կենտրոնում: Մասնակցելով լուսմներին կենտրոնի համակարգողը հետամուտ է եղել, որպեսզի նախորդ քննարկումների ընթացքում ՇԿ-ների կողմից առաջարկությունները և

Հայաստանի Օրինու կենտրոններ

դիտողությունները տեղ գտնեն զեկույցում, հատուկ ուշադրության է ներկայացվել ինչպես նաև «Բիոտֆիա» ՀԿ-ի կողմից՝ «Տեսչություններում կառավարման խորհուրդներ ստեղծելու մասին» ՀՀ կառավարության որոշմանն առնչվող առաջարկությունը: Արդյունքում զեկույցի նախագիծն իրականացնող՝ Հայաստանում Օրինուի կոնվենցիայի Ազգային համակարգողը նշվել է, որ հնչեցված առաջարկությունները անպայման հաշվի կառնվեն զեկույցի վերջնական տարբերակում: Իրականում այս զեկույցի մասին ոլորտի հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները տարակարծիք են, որոշ ՀԿ-ներ անիմաստ են համարում մասնակցությունը, քանի որ համոզված են որ բացասական կարծիքները տեղ չեն գտնի զեկույցում:

2.2.3.4 ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից կազմակերպվող «Հայաստանի Հանրապետությունում աղետների ռիսկերի նվազեցման, աղետների վաղ ազդարարման և դիմակայման համակարգի ստեղծումը և զարգացումը» թեմայով խորհրդարանական լսումներին:

2.2.4 Ձեռք բերված արդյունքներ:

2.2.4.1 Հանրության շրջանում լայն արձագանք է գտել Թուխմանուկի ոսկու հարստացուցիչ ֆաբրիկայի նոր պոչամբարի նախագծի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված բացասական եզրակացությունը, բազմաթիվ ԶԼՄ-ներ անդրադարձել են դրան:

2.2.4.2 Խորհրդարանական լսումների ժամանակ հնչեցվել են Երևան քաղաքի խիտ կառուցապատման, սեյսմիկ ռիսկերի, քաղաքաշինական նորմերի խախտումների բազմաթիվ օրինակների: Առաջարկվել է, որ քաղաքաշինական փորձաքննությունը, որը ներկայումս մասնավոր մարմին է դարձնել պետական: Արդյունքում ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը պատրաստակամություն է հայտնել, որ այսուհետ այդ խնդիրները կլինեն հանձնաժողովի ուշադրության կենտրոնում և ցանկացած ժամանակ պատրաստ են համագործակցելու:

2.2 ՆՊԱՏԱԿ 4

Կազմակերպում է հասարակայնության և տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցությանը նպաստող միջոցառումներ (համայնքի տարածքում առկա բնապահպանական խնդիրների վերհանման ու համատեղ ուժերով դրանց լուծումներ տալու վերաբերյալ քննարկումներ, շաբաթօրյակներ և այլն):

2.2.5 կատարված գործողություններ

2.2.5.1 Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը Երևանի քաղաքապետարանին հարցումների միջոցով փորձել է պարզաբանել Երևան քաղաքի ջրային օբյեկտների, օդային ավազանի աղտոտվածության նվազեցման, աղբավայրերի վիճակի, դրանց սպասարկման և աղբահանության խնդիրների լուծմանն ուղղված քաղաքապետարանի կողմից իրականացվող և նախատեսվող ծրագրերի մասին:

2.2.5.2 Երևանի քաղաքապետարանին կից Էկոլոգիական հանձնաժողովի նիստերի ընթացքում կենտրոնի համակարգողի կողմից Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչությանը առաջարկություններ են ներկայացվել Հրազդանի կիրճի, Հրազդան գետի, Երևանյան լճի Էկոլոգիական իրավիճակների բարելավման ուղղությամբ:

2.2.5.3 Կենտրոնը ոլորտի մասնագետների ու շահագրգիռ բոլոր կողմերի ներգրավմամբ կազմակերպել և իրականացրել է հանրային քննարկում՝ Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ, ցավոք այս քննարկմանը քաղաքապետարանի ներկայացուցիչները չեն ներկայացել: Քննարկման ընթացքում հնչեցված առաջարկությունները և կարծիքները ներկայումս ամփոփվում են և կներկայացվեն համապատասխան պատկան մարմիններին, այդ թվում՝ Երևանի քաղաքապետարանին:

2.2.5.4 Քաղաքապետարանի կողմից իրականացվող միջոցառմանը՝ շաբաթօրյակ Հրազդանի կիրճում մասնակցել են նաև կենտրոնի կամավորները:

2.2.5.5 Արձագանքելով բնակիչների ահազանգերին, կենտրոնը դիմել է Երևանի քաղաքապետարանին և համապատասխան վարչական շրջաններին մի շարք խնդիրների կապակցությամբ.՝ Ավան-Առինջ թաղամասում կոյուղաջրերի արտահոսք, Երևանի Պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջի տարածքում կատարվող բարդիների «խորը էտում», ծառերի անօրինական էտման դեպքեր և այլն:

2.2.5.6 2013թ. ձևավորվել է «Կանայք» քաղաքացիական նախաձեռնությունը, որի ակտիվ անդամ է նաև Կենտրոնի համակարգողը: Նախաձեռնության ձեռնարկած ուղղություններից մեկն է «Նուբարաշենի աղբավայրում կենսագազի օգտահանման ու էլեկտրաէներգիայի արտադրության» նախագծի իրականացման արդյունավետությանն առնչվող հարցերը: Այս խնդրի քննարկման վերջնական նապատակն է, որպեսզի նախագիծն իրականացվի ամբողջ ծավալով, այլ ոչ մասնակի, ինչպես հիմա է արվում, որը ոչ միայն էապես կնպաստի քաղաքի էկոլոգիական իրավիճակի բարելավմանը, այլև նյութական օգուտներ կբերի: Այս և մի շարք այլ հարցեր «Կանայք» նախաձեռնության գործունեության առանցքային ուղղությունն են հանդիսանում, որոնք ի վերջո նպատակ ունեն բարձրացնել հանրային սեփականության պատկանելիության և կառավարման խնդիրները:

2.2.5.7 Երևանի քաղաքապետարանի բնապահպանության վարչության հրավերով, կենտրոնի համակարգողը մասնակցել է նաև Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի ճարտարապետության հանձնաժողովի նիստին: Եթե նախկինում հանձնաժողովները գործում էին անկախ մեկը մյուսից, այժմ հասարակական կազմակերպությունների, Օրհուս կենտրոնի առաջարկով և պահանջով նիստերին հրավիրվում են նաև բնապահպանության ոլորտի մասնագետներ: Նիստի ընթացքում համակարգողի կողմից առաջարկվել է, որպեսզի քննարկվող բոլոր նախագծերում հաշվի առնվեն բնապահպանական և բնակչության անվտանգությանն առնչվող հարցերը:

2.2.6 Ձեռք բերված արդյունքներ:

2.2.6.1 Արձագանքելով Երևան քաղաքի Չարենց փողոցի բնակիչների բողոքին, դեռևս 2012թ. կենտրոնը մի շարք գրություններ է ուղղել Երևանի քաղաքապետարանին և Կենտրոն վարչական շրջանի ղեկավարին, Չարենց փողոցում՝ բնակելի տներին անմիջական հարևանությամբ գործող բենզալցակայանի ապամոնտաժման հարցերով, և սեպտեմբերի 13-ին՝ քաղաքապետարանի որոշմամբ [բենզալցակայանն ապամոնտաժվեց](#):

2.2.6.2 Կենտրոնի ահազանգի արդյունքում արագ կարգով վերացվել է Ավան-Առինջ թաղամասում կոյուղաջրերի արտահոսքը:

2.2.6.3 Կենտրոնի արձագանքի արդյունքում՝ Միկոյան 14 շենքին հարակից տարածքի ծառերի անօրինական էտման դեպքի կապակցությամբ, ՀՀ բնապահպանության նախարարության տեսուչների կողմից կազմել է արձանագրություն և անօրինական էտ կատարող հիմնարկը զգուշացվել է:

2.2.6.4 Հրագրանի կիրճի, Երևանյան լճի, Հրագրան գետի էկոլոգիական վիճակների բարելավման ուղղությամբ կենտրոնը առաջարկություն է ներկայացրել Երևանի քաղաքապետարանին՝ Հրագրանի կիրճի երկայնքով կոյուղագիծ անցկացնել, որը կընդգրկի Հրագրանի կիրճի տարածքի բոլոր առանձնատների, սպասարկման և արտադրական օբյեկտների կեղտաջրերի խողովակները, որոնք այժմ անմիջապես գետ են լցվում: Կոյուղատարը Երևան քաղաքի համար նաև համայնքային անվտանգության խնդիր է լուծում, քանի որ Հրագրանի կիրճի հարևանությամբ՝ Դավթաշենի կամրջի սկզբնամասով է անցնում քաղաքի կենտրոնական կոյուղագիծը և վթարային իրավիճակների դեպքում, կոյուղաջրերը կարող են լցվել Հրագրան գետ՝ վտանգավոր սանիտարական իրավիճակ ստեղծելով ամբողջ քաղաքի համար: Առաջարկվող կոլեկտորը երկրորդային կոլեկտորի դեր կկատարի՝ բացառելով վերոնշյալ իրավիճակները: Քաղաքապետարանի բնապահպանության վարչությունից հայտնել են, որ նախագծի մասին քաղաքապետարանում տեղեկացված են և հնարավորության դեպքում այն կյանքի կկոչեն:

Շրջակա միջավայրի պահպանության նկատմամբ պատասխանատու վարքագծի ձևավորան գործընթացին խթանելու նպատակով՝ համայնքների բնակչության և համայնքային կազմակերպությունների համար կազմակերպում և անցկացնում է էկոկրթական դասընթացներ:

2.3.1 կատարված գործողություններ,

Կենտրոնի գործունեության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում էկոկրթությանն ուղղված միջոցառումները: Հաշվետու ժամանակահատվածում նույնպես կենտրոնը մի շարք միջոցառումներ է անցկացրել այս ուղղությամբ:

2.3.1.1 Կենտրոնը սերտորեն համագործակցում է ԳԱԱ երկրաբանական թանգարանի հետ և դեռևս 2012թ. Թանգարանի և ՕԿ-ի միջև ստորագրվել էր Փոխհամագործակցության հուշագիր և հաշվետու ժամանակահատվածում համատեղ մի շարք միջոցառումներ են անցկացվել, այդ թվում՝ «Դասընթաց Օգոնային շերտի պահպանության մասին», թեմատիկ ֆիլմերի դիտումներ և այլն:

2.3.1.2. Նպատակ ունենալով գալիք սերնդի մեջ սերմանել բնության նկատմամբ հոգատար վերաբերմունք, Երևանի և Գավառի Օրհուս կենտրոնների համակարգողները՝ համատեղ անցկացրեցին «Կոշտ կենցաղային թափոնները և դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա» թեմայով հնգօրյա սեմինարներ Գավառ և Վարդենիս քաղաքներում, որոնց անցկացման համար ֆինանսական աջակցություն ցուցաբերեց Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության Գավառի գրասենյակը:

2.3.1.3. Տարեսկզբին Երևանի Օրհուս կենտրոնի և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ծրագրի աշխատակիցներն աշխատանքային հանդիպում ունեցան և համագործակցության պայմանավորվածությունն ձեռքբերեցին: «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ծրագրի աշխատակիցները, կարևորելով բնապահպանության ոլորտում Օրհուս կենտրոնների վաստակած փորձը, առաջարկեցին համատեղ միջոցառումներ անցկացնել շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ: «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության՝ ԱՄՆ ՄԶԳ հովանավորությամբ իրականացվող «Ձեռնարկատիրական և քաղաքացիական կրթություն երիտասարդների համար» ծրագրում ընդգրկված 25 աշակերտների համար ապրիլի 22-ին Երևանի Օրհուս կենտրոնում տեղի ունեցավ Երկրի համաշխարհային օրվան նվիրված միջոցառումը:

2.3.1.4. «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ծրագրի հետ համագործակցության հաջորդ քայլը հունիսի 5-ին Շրջակա միջավայրի պաշտպանության միջազգային օրվան նվիրված յուրահատուկ միջոցառումն էր, որը անցկացվեց Երևանի մանկական զբոսայգում, որտեղ ուսուցողական բնույթի մի շարք միջոցառումներ իրականացվեցին Հայաստանի մարզերից և Երևանից ընդգրկված 110 մասնակից երեխաների համար: Իրականացվեց «ՀՀ կարմիր գիրքը և դրա դերը բնության պահպանության գործում»

Հայաստանի Օրինու կենտրոններ

Թեմայով դասընթաց, էկոպայուսակների պատրաստում, պլաստիկ թափոններից պիտանի իրերի պատրաստում և այլն: Այնուհետև երեխաներն իրենց ձեռքերով պատրաստեցին և ցուցադրեցին զանազան իրեր: Միջոցառումն ուղեկցվեց նաև ինտերակտիվ խաղերով և ֆլեշմոբով:

2.3.22 Եռոթ բերված արդյունքներ:

2.3.2.1 Կենտրոնը մեծ հեղինակություն ունի այս ոլորտում, հաշվի առնելով կենտրոնի հեղինակությունը և վաստակած փորձը կենտրոնի հետ համագործակցության հարցերով դիմում են այլ կազմակերպություններ: Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը՝ էկոկրթական հարցերով համագործակցել է «Հայաստանի պատանեկան նվաճումներ» ծրագրի հետ և ստացել է [շնորհակալական նամակ](#), ինչպես նաև Վորլդ Վիժն Հայաստան կազմակերպության Գավառի գրասենյակի, ՀՀ ԳԱԱ Երկրաբանական թանգարանի, Երևանի մի քանի դպրոցների և ԲՈՒՀ-երի հետ:

2.3.2.2 Կենտրոնի ակտիվ այցելուներից են բնագիտական թեքումով բուհ-երի ուսանողները, մագիստրանտները և ասպիրանտները, որոնց կենտրոնը աջակցում է կենտրոնի ռեսուրսներով, նպաստելով նրանց կրթական մակարդակի բարձրացմանը, վերջիններիս դիտարկելով՝ ապագա գործընկերների:

2.4 ՆՊԱՏԱԿ 6

Կազմակերպում է Կենտրոնի ամենօրյա աշխատանքները, ապահովում է Կենտրոնի գույքի նպատակային օգտագործումն և պահպանումը: Կազմում, անհրաժեշտության դեպքում նաև լրամշակում և ներկայացում է Կենտրոնի տարեկան աշխատանքային պլանի նախագիծը, կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններն ու ֆինանսական փաստաթղթերը:

2.4.1 կատարված գործողություններ,

Հաշվետու ժամանակահատվածում Կենտրոնի համակարգողի և աշխատակցի կողմից ապահովվել է կենտրոնի ամենօրյա աշխատանքները, այդ թվում՝

- 2.4.1.1. Աշխատանք կենտրոնի այցելուների հետ՝ տեղեկատվության տրամադրում, այլ ծառայություններ:
- 2.4.1.2. Կենտրոնի տարածքը տրամադրվել է այլ կազմակերպությունների կողմից միջոցառումներ անցկացնելու նպատակով՝ 18 անգամ:

Հայաստանի Օրհուս կենտրոններ

2.4.1.3. Կենտրոնի համակարգողի կողմից կազմվել է կենտրոնի աշխատանքային պլանի նախագիծը, կատարած աշխատանքների եռամսյա և տարեկան հաշվետվությունը:

2.4.1.4. Կենտրոնի համակարգողի կողմից տարվել է նաև ընթացիկ աշխատանք կենտրոնի կատարած աշխատանքների վիճակագրական հաշվետվությունը կազմելու համար՝ այցելուների գրանցում, կատարված ընթացիկ աշխատանքների վերաբերյալ նշումներ:

2.4.2 Ձեռք բերված արդյունքներ:

2.4.2.1 Ապահովվել է կենտրոնի ամենօրյա աշխատանքները, կենտրոնի կողմից իրականացվել է 32 միջոցառում, որոնց մասնակցել են թվով՝ 678 մարդ, կենտրոնը հանդիսացել է ռեսուրս կենտրոն՝ հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի ծառայություններից օգտվել են 413 մարդ, կենտրոնի տարածքը այլ կազմակերպությունների կողմից օգտագործվել է 18 անգամ:

2.4.1.2 Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնի կողմից իրականացված միջոցառումները լուսաբանվել են Օրհուս կենտրոնների կայքում, ինչպես նաև այլ կայքերում և լրատվամիջոցներում, տարածվել է նաև սոց. ցանցերի միջոցով:

3 **Ծրագրի ֆինանսական հաշվետվություն:** /կարող եք տեսնել կից ֆայլով/

4 **Ծրագրի ուղղակի և անուղղակի շահառուները, համագործակից կառույցներն ու փորձագետները:**

ԵԱՀԿ

ՄԱԿ-ի բնապահպանական ծրագիր

Հայկական Կարմիր խաչ

Մարզպետարաններ

Քաղաքապետարաններ /ՏԻՄ-եր/

Նախարարություններ

ՀԿ-ր

Քաղաքացիներ

ԶԼՄ-ներ

ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա

ՀՀ Տեխնոլոգիական ակադեմիա

Բուհ-եր

Դպրոցներ

Տնտեսվարող սուբյեկտներ

5 Օրագրով ձեռք բերված փաստացի արդյունքեր, քաղած դասեր և եզրակացություններ

2013թ.-ի ընթացքում կենտրոնը առավելապես ուշադրության է արժանացրել համայնքային անվտանգությանն առնչվող խնդիրները, հարցումների միջոցով համալրվել է կենտրոնի տեղեկատվական բազան՝ Երևան քաղաքի վարչական տարածքում շահագործվող հանքավայրերի, քաղաքի ջրային օբյեկտների, օդային ավազանի, թափոնների մասով: Առկա տեղեկատվությունը կայքի միջոցով հասանելի է եղել լայն հասարակությանը:

Հաճախ անհրաժեշտություն է եղել նույն հարցումը կրկնակի անգամ ուղարկել, քանի որ հարցումներին ոչ լիարժեք են պատասխանել, խուսափելով բուն պատասխանից, կամ օրենքով սահմանված ժամկետում չեն պատասխանել:

Հաշվետու ժամանակահատվածում կենտրոնը իրազեկել և նպաստել է հասարակության մասնկացությանը մի շարք իրավական ակտերի նախագծերի քննարկման գործընթացին:

Չնայած նրան, որ «Գենետիկորեն ձևափոխած օրգանիզմների մասին» և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքների նախագծերը նախապես վաղ փուլերում հասանելի են եղել և Օրհուս կենտրոնը հնարավորինս իրազեկել և ներգրավել է հասարակությանը, բայց չի կարելի համարել, որ այդ մասնակցությունը եղել է արդյունավետ, քանի որ ՀՀ օրենսդրության համակարգում բացակայում են հասարակության մասնակցությունն ապահովող իրական ու գործուն մեխանիզմները, բացի այդ զգացվում է նաև մասնագիտական ներուժի պակաս:

Կենտրոնը ընդլայնել է իր համագործակցության շրջանակները, եթե նախկինում գերակշռում էր համագործակցությունը Ազգային մակարդակում, ապա այժմ կենտրոնը սերտորեն համագործակցում է նաև ՏԻՄ-ի հետ: ՀԿ-ների և Օրհուս կենտրոնի պահանջով քաղաքաշինական ծրագրերը քննարկելուց նիստերին հրավիրվում են նաև բնապահպանության ոլորտի մասնագետները: Մակայն այստեղ մտահոգություն կա, որ այդ ամենը կարող է իմիտացիոն բնույթ կրել: Այնուամենայնիվ իրազեկվածության և ինչ-որ չափով որոշումներ ընդունելու վրա ազդեցության տեսակետից ճիշտ է համարվում մասնակցությունը:

Կենտրոնը պահպանում է հեղինակությունը և իր առաքելության շրջանակներում իրականացնում կապող օղակի դեր՝ շահագրգիռ հասարակության և պետական կառույցների միջև, ինչպես նաև աջակցում է քաղաքացիական նախաձեռնություններին: Հաշվետու

Ժամանակահատվածում կենտրոնը շարունակել է իր սերտ համագործակցությունը Էկոլոգիական հասարակական դաշինքի հետ և նպաստել է «Կանայք» քաղաքացիական նախաձեռնության ստեղծմանը և գործունեությանը, ինչպես նաև համագործակցել է մի շարք այլ կազմակերպությունների հետ:

6 Օրագրի շրջանակներում ի հայտ եկած դժվարություններ և նոր լուծումներ:

Շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող խնդիրների քննարկման գործընթացին, հասարակության ներգրավման գործում նկատվում է հասարակության կողմից անտարբերություն, քանի որ գերիշխում է այն մտածելակերպը, որ իրենց մասնակցությունը զուտ ձևական բնույթ ունի, մինևույն է ոչինչ չի փոխվի, իրենք չեն կարող որևէ ազդեցություն ունենալ որոշումների կայացման գործընթացի վրա: Օրհուս կենտրոնը իր գործունեության շրջանակներում իրազեկում և կրթում է հասարակությանը, նպաստելով՝ հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, սերմանելով նրանց մեջ իրենց իսկ հանդեպ պատասխանատվության և ապագա սերունդներին հաշվետվողականության վարքագծի ձևավորմանը:

Հաճախ նախատեսվող գործունեությունների նախագծերը հասանելի չեն լինում լիազոր մարմնի կայքում և հայտարարության մեջ նշվում է Բնապահպանական պետական փորձաքննության հասցեն, որտեղ կարող են ծանոթանալ նախագծերին, որը իհարկե խոչընդոտ է հանդիսանում հասարակության մասնակցությանը, հասարակությունը հնարավորություն չի ունենում ծանոթանալու դրանց, բացի այդ նկատվում է մասնագիտական ներուժի պակաս: Այս ամենը նորից խոսում է հասարակության մասնակցության ընթացակարգերի բացակայության մասին, որը լուրջ խոչընդոտ է հանդիսանում՝ որոշումների կայացման գործընթացին հասարակության պատշաճ մասնակցությանը: Այս առումով Հայաստանի Օրհուս կենտրոնները նամակով դիմել են ՀՀ ազգային ժողովին, առաջարկելով՝ համատեղ ուժերով, հասարակական երկխոսության և համագործակցության ճանապարհով գտնել իսկալիս լուծումներ, աշխատանք տանել վերոնշյալ, ինչպես նաև մի շարք այլ հարցեր օրենքում ամրագրելու ուղղությամբ և հասնել իրավիճակի բարելավման:

Հարկ է նշել նաև Երևան քաղաքում քաղաքաշինական որոշումներ ընդունողների ու պատասխանատուների կողմից ՀՀ օրենսդրության և քաղաքաշինական նորմերի խախտումների մասին, ինչի արդյունքում ՀՀ շարքային քաղաքացիները ստիպված են թողնել իրենց բուն զբաղմունքն ու վազել այս կամ այն ապօրինի շինարարությունը հանրային կանաչ գոտիներում կանգնեցնելու համար: Շատ ծրագրեր չեն անցնում բնապահպանական փորձաքննություն, քանի որ նախագծով նախատեսված տարածքը չի գերազանցում 1500 քառակուսի մետրը, իսկ քաղաքաշինական փորձաքննությունը իրականացվում է մասնավոր հիմնարկի կողմից: Ամբողջ գործընթացը գտնվում է Երևանի քաղաքապետարանի հսկողության տակ, իսկ քաղաքապետարանը ակնհայտ մատնանշում է, որ ծրագրերը համապատասխանեցվում են ներդնողի պահանջներին: Այս առումով նույնպես առաջարկվել է

Ազգային ժողովին, որպեսզի քաղաքաշինական փորձաքննությունն իրականացվի պետական լիազոր մարմնի կողմից:

7 Օրագրի գնահատում և շարունակականություն

Անշուշտ Հայաստանի Օրհուս կենտրոններն իրենց նեղումն ունեն շրջակա միջավայրի պահպանության գործում, հետևաբար հարկ է նշել, որ Օրհուս կենտրոնները բարեխղճաբար կատարել են հուշագրով ամրագրված իրենց առաքելությունը՝ հանրության բնապահպանական իրազեկվածության մակարդակի բարձրացման և որոշումների կայացման գործընթացում հասարակության մասնակցությանն աջակցելու հարցերում:

Հաշվի առնելով Հայաստանի էկոլոգիական հիմնախնդիրները և դրանց առնչվող օրենսդրական բացերը հարկ է նշել, որ Օրհուս կենտրոնները դեռևս շատ անելիքներ ունեն: Կենտրոնների հիմնական առաքելությունն է նպաստել Հայաստանում Օրհուսի կոնվենցիայի դրույթների իրականացմանը՝ հասարակության տեղեկացվածության մակարդակի բարձրացման միջոցով, որը կարևոր նախապայման կհանդիսանա հասարակության հետագա առաջընթացի ապահովման, հետևաբար նաև մարդկանց կյանքի բարելավման գործում:

Ելնելով վերոնշյալից, Օրհուս կենտրոնների հետագա անելիքները պետք է ներառեն առաջին հերթին իրազեկման և կրթական աշխատանքներ, որոնք կնպաստեն հասարակության ներգրավմանը բնապահպանական խնդիրների քննարկման և լուծման գործընթացին, այնուհետ կենտրոնները ելնելով Օրհուսի համաձայնագրի դրույթներից ու ժողովրդավարական սկզբունքներից, պետական և ոչ պետական կառույցների հետ՝ համատեղ ուժերով, հասարակական երկխոսության և համագործակցության ճանապարհով պետք է աջակցեն հասարակայնության մասնակցության ընթացակարգային դրույթները օրենքում ամրագրելուն, որը կապահովի հասարակության իրական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացին:

8 Վիճակագրական մանրամասն տվյալներ Օրհուս Կենտրոնների կողմից իրականացված միջոցառումների և մատուցված ծառայությունների վերաբերյալ: /կարող եք տեսնել կից ֆայլով, /

9 Հաշվետվությանը կից ներկայացվող նյութեր (լուսանկարներ, տեսաձայնային նյութեր, հրապարակումների և շնորհակալական նամակների օրինակներ, հաջողված դեպքեր և պատմություններ և այն):

Երևանի Օրհուս կենտրոնի կողմից իրականացված աշխատանքների մասին, մանրամասն կարող եք տեսնել՝ www.aarhus.am կայքի «Yereavan» բաժնում:

Կենտրոնի համակարգող Միլվա Այվազյան

E-mail: info@aarhus.am, silvaa@list.ru

Հեռ: +374 10 55 13 64